

ՄԱՍԿ

Տարեկան դիմել 10 րուր, կես տարվանը 6 րուր:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից ամիսը մեկ անգամ:

Օտարապետացիք պիտու է ևս ողորակի
Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաջօրե 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարությունները ընդունվում է մինչև լույսը:

Յայտարարությունների համար գծարվում են
խրատներ ըստ 2 կոպեկի:

ԲՈՎԱՆԴԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, «Երկր» լրագրի յո-
ղուածի առիթով, Նամակ Աւելանդարացիք—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, Սպանիա Բոլորիս,
Յունաստան, Թիւրքիա, Նամակ Թիւրքիայից—
ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ, — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ, — ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Թիւր-
քացի Հայաստան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«ԳՈՐԾ» ԼՐԱԳՐԻ ԹԻՖԼԻՍԻ ԱՌԻԹՈՎ

«Голосъ» լրագրում (№ 169) մի գէպը
է մանրամասն նկարագրված, որ մեզ հայե-
րիս համար հարկաւորապէս աւելի համո-
զիչ նշանակութիւն ունի, քան թէ 15
հաս հաստաւոր գրքերի հատորներ ման-
րակրկիտ ապացոյցներով և փաստերով լրջ-
ված: Մինչդեռ ամբողջ քաղաքակիրթ աշ-
խարհում ամեն մի ազգ ապրում է բնական
կեանքով և կառավարվում ու ներկայանում
է իր բանիբուն լուսաւորեալ անհատների
միջոցով, մեզանում կան տակաւին շատ ան-
ձինք, որոնք—կամ թիւր տրամաբանկով,
կամ, որ աւելի հաւանական է, անձնական
շահերից շարժված,—ամեն լոյս իրողու-
թեանը հակառակ՝ ազգային գործերի ղեկը
ուզում են գնել հոգեւորականների ձեռքը,
այնպիսի հոգեւորականների, որոնց տգիտու-
թիւնը և անընդունակութիւնը, որ աւելի
հրատարակվում է, առանց բացառութեան,
մեր հայախօս բոլոր պարբերական թեր-

թերի մէջ: Այդ թիւր տրամաբանները ու-
զում են մեզ հաւատացնել, որ հայ ազգը
կարող է աշխարհում ներկայանալ միմիայն
իր հոգեւորականների միջնորդութեամբ,
նորանք առում են, որ եթէ մենք վար-
դապետների և եպիսկոպոսների միջոցով չը
ներկայանանք, և եթէ բաց թողնենք հոգե-
ւորականներին, այն ժամանակ բոլորովին
կը կորչի մեր ազգային նշանակութիւնը և
մենք իբրեւ ազգ կոչնչանանք:

Ահա այդ փաստերը տրամաբանութեան
հակառակ է ուսումնասիրում պատմվածը:
Անցեալ մայիսի 19-ին բախտաւոր եղան 18
հոգի ներկայանալ Ոգոստափառ կայսրին
իբրեւ էստօնեան ազգի պատգամաւորներ,
որպէս զի մի կողմից արտայայտէին իրանց
ազգի ճշմարտութիւնը անմոռանալի կայսր
— Հօր մահուան առիթով, իսկ միւս կողմից
իրանց հաւատարիմ հպատակութիւնը յայ-
տնէն: Որոնք են այդ պատգամաւորութեան
անդամները: Գորանք չեն եկեղեցու պատ-
տօրները, կամ եպիսկոպոսները, այլ 17 գա-
նաղան ուսումնական, գրականական, գիւ-
ղատնտեսական, երկրագործական, բարե-
գործական, զեղարուեստական ընկերու-
թեանց կողմից ուղարկված անձինք: Մէկը
պրոֆեսոր է, միւսը լրագրագետ, մի ու-
րիշը քաղաքային վարչութեան անդամ, և
այլն: Նրանց միջում կայ միմիայն մէկ հո-
գեւորական, և այն էլ ոչ իբրեւ եկեղեցու
ներկայացուցիչ, այլ իբրեւ էստօնեան գը-
րագիտական ընկերութեան պատգամաւոր:
Եւ ինչպէս լրագիրը տեսնում է, դիպու աւ-

ծով պատահել է այդ պատգամաւորու-
թեան մէջ և «Սակալ» լրագրի խմբագրի
12 տարեկան որդին ևս:

Ուրեմն լուսաւոր ընկերութեանց ներկա-
յացուցիչները կարող են մի ազգի պատ-
գամաւորները լինել և հոգեւորականներից
աւելի լաւ ներկայացնել այն ազգը: և այս
գէպը մեզ պէտք է իմանալ, որ էստօնեանը
ունեն գուցէ համալսարանում աւարտած
հարիւրի չափ հոգեւորականներ, որոնց
կործքը զարգարված է այլ և այլ շքանշ-
աններով: Բայց նորանք ընտրեցին պատ-
գամաւորներ բուն ազգային ինտելիգենցիա-
յից:

Այդ պատգամաւորութիւնը առաջ ներ-
կայացաւ արտաքին գործերի նախարարին,
որ նորանց ընդունեց սիրով, յետոյ գնացին
արթնացնել նորակառոյց մատուռի մէջ, այն-
տեղից հանդիսաւոր կերպով գնացին Պետ-
րօպօլիսան մայրեկեղեցին և այնտեղ դը-
րին մի ճարտարահիւս արծաթեայ պսակ
յաւերժացեալ կայսրի գերեզմանի վրա՝
էստօն և ուսնաց լեզուով՝ արձանագրված
«կայսր Ալեքսանդր երկրորդին՝ երախտա-
գէտ էստօնեան ազգից: Եւ այնտեղ աղօ-
թեցին էստօնեան:

Յետոյ այդ պատգամաւորները Պետերհոֆ
գնալով՝ տարվում են արքունի շքեղ կառ-
քերով կայսերական պալատը և ներկայա-
նում են կայսրին և կայսրուհուն Պատգա-
մաւորներից մէկը բռնած է ունենում իր
ձեռքին դարձեալ էստօնեան և ուսնեան
գրված հանրագիրը, որ կարդում է նա

զգացված ձայնով: Կայսրը բարեհաճում է
ողորմաճաբար ընդունել էստօնեաների ընկե-
րութեանց ստորագրութիւններով ծածկված
հանրագիրը: Այդ միջոցին էստօնեան «Սա-
կալ» լրագրի խմբագիրը հրաման է խըն-
դրում և արժանանում է ուղղել կայսրու-
հուն մի ուղերձ նորնապէս էստօնեան լեզուով,
որ թարգմանում է մի ուրիշ պատգամա-
ւոր: Կայսրուհին զգածված այդ հաւատա-
րիմ հպատակների զգացումներից շնորհա-
կալութիւն է յայտնում:

Ի վերջոյ խօսում են և երկու պատգա-
մաւորներ, որոնցից մէկը սրտանց անկեղծ
շնորհակալութիւն է յայտնում նորին կայ-
սերական Մեծութեան, որ նա արտօնութիւն
է շնորհել էստօնեան ազգին իրանց լեզուով
գրքեր և լրագրեր հրատարակել և կայսրի ու
կայսրուհու կենաց համար բարեմաղթու-
թիւններ անելով՝ վերջացնում է պատգա-
մաւորը իր խօսքը այսպէս՝ «էստօնեան ազ-
գը յոյս ունի որ այսուհետեւ պէտք է կա-
րգանայ առանց արգելքի արծարծել իր
ազգային գրականութիւնը և զարգացնել
իր գրականական լեզուն»: Ի՛նչ ագնիւ և
արժանաւոր ու վսեմ հանգէս:

Հիմա այս պատգամաւորութիւնը բաղ-
դատելով մեր այն արծաթեայ պսակի հետ,
որ և կ և դ և ց ու անունով մի քահանայ
տարաւ դրաւ անմոռանալի կայսրի գերեզ-
մանի վրա և շուտ ու մոռնջ յետ դարձաւ,
մեր սրտերում ուրիշ տեսակ զգացմունքներ
են շարժվում: Մենք պէտք է միշտ ամա-
չենք քանի որ սխալ դիրք ենք բռնում

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Ա. ՄԱՍԻ ՇԱՐԻՆԱԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Վանայ ծովը պէտք է վեր առնել նաև իբրեւ
սարգիստութեան ամենակարճ ճանապարհը բոլոր
չլիակալ ծովափնեայ գաւառների, ինչպէս Ար-
ճիշոյ, Արձիկի, Ախաթի, Մանազկերտի, Կարճ-
կանից, նաև Բաղիշոյ, Մշոյ և Կարնոյ հետ,
եթէ չզգնաւ շինութիւնը գլուխ գալ, դա մեծ
զարկ կը տայ Վանայ առևտուրին: *)

Վանայ առևտրական չլիակալ շատ նեղ է, դա
կատարվում է նախնայի գաւառների մէջ, նա յա-
րաբերութեան դերին և հասարակ ճանա-
պարհներ անգամ չունի. կառավարութիւնը
պարտք չէ համարել այդ կարևոր կէտի վրա
մտածել, դրա համար էլ Վանայ վիլայէթը
բոլոր հաղորդակցութիւններից կտրված մի
անձանթ աշխարհ է: Կ. Պօլսից Վան հե-
ռազալուրը ամիսներով է հանում: Փոստային
հաղորդակցութիւնը անկարգութեան պէս ան-
կարգ է, բայց և այնպէս պատիւ ազգ
քաղաքի վաճառականներին, որ անտանելի
ղծուարութիւններով ստանում են Կ. Պօլսից

*) Շողենաւի ընկերութիւնը արդէն արգելքնե-
րին յաղթեց, նա ստացաւ կառավարութիւնից ի-
րաւունք (ինքնագրով) և բաժանորդագրութեան
ստորագրութիւնը արդէն թէ Կ. Պօլսում և թէ
Վանում սկսած է: Թիւրքաց կառավարութիւնը
մեծ դժուարութիւն հանց ընկերութեան դէմ,
նա կարծում է թէ հայերը չզգնաւ ապստամ-
բութեան համար են պատրաստում: Գորա պէս
և թիւրքերը ամեն բարեկարգութենից խըրո-
նում են: Շողենաւի համար կարճատեւից ծովափ-
նեայ գաւառի հանքեր առաւ և ընտիր քարա-
ծուխ ունեն պատրաստ:

Եւրոպական ապրանքներ, Պարսկաստանից բամ-
բակ, երկաթ, բրինձ, Ամերիկայից նաւթ, իսկ
Ռուսաստանի հետ ոչ մի հաղորդակցութիւն
չունեն: Չը նայած որ երկաթ, բրինձ *) պար-
սիկները Ռուսաստանից են փոխադրում թաւերի
և այնտեղից Վան, չը նայած, որ ուսնաց սա-
մախի մինչև Ալանց նաւահանգիստը երեք օր-
վայ ճանապարհ է, բայց թիւրքերը աշխատել
են անանցանելի առնել այդ ճանապարհը, որպէս
զի ազատ մնան Սարի-Կիսիլուրի (գեղին ան-
հատ) խմորից:

Ճանապարհների այդ վիճակը արգելում է բո-
լորովին Վանայ նախնայի արդիւնաբերութիւնը
արտահանել, դրա համար էլ Վանի նախնայից
վաճառահանվում է միայն կեաթ (չուռ այծի
մաղ) և նրանով գործված շաւղէններ, նոյնգներ,
ընկուղներ և կոճղ և տաւելի ձուկ:

Արհեստները նախնայական ժամանակից
սկսածի շարունակութիւնն են: Բաղմաթիւ կառ-
ւարդներ, ներկարարներ, չիթ շինողներ կան,
որոնց գործը թէ և կոպիտ, բայց զինացելու և գա-
ւառների միմիայն գործածական է: Վերջին տա-
րիներին թոխմակեան եղբայրները բարակ բամ-
բակեղէնների համար մի գործարան բացին, որոնց
մասնաճիւղը Եւրոպայից են ստանում:

Մի գործարան ևս բացված է եւրոպական ե-
ղանակով կաշիներ պատրաստելու: ազգայնու-
թեան զգացմունքը երիտասարդների մէջ արագ
զարգանում է: Ընթերցարանի և լսարանի ծա-
ռայող մի քանի ընկերութիւններ կան, որոնցից
նշանաւորը խնամատար ընկերութիւնն է, որ
18 որբեր է խնամում:

Քաղաքում և Ալգեստանում բնակվող հայերի
թիւն է 18,965: Թիւրքաց թիւը 8450: Հայոց
վարժարաններ 8-են, որոնցից միւրը միայն վերա-

*) Պարսիկներ բրինձը երանանաւ նախնայից
են ստանում:

երում է գեղեցիկ սենյակ: 1460 աշակերտներ,
240 աշակերտահիւր, 12 եկեղեցիք:

2.

Թ Ի Մ Բ Բ

Թիմար գաւառը Վանայ չլիակալ գիւղերն
են: հնում կոչվում էր Տոսպ: Վարագայ լեռը իր
մանր թերթիկ և արևմուտքից Վանայ ծովը չլիա-
պատում են այս գաւառը: Ողբ բարեխառն է,
զիրքը մեծ մասամբ դաշտային: Աշակերտները
ծաղկած չէ: Չուրբ քիչ է, դուրս համար էլ Վարա-
գայ լեռան ջրերը ժողովվում են երեք լճերի մէջ,
որոնցից օգուտ են քաղում և Վանայ ալգեստան-
ները: Վանից 3 ժամ հեռաւորութեամբ Արշակ
գիւղի մօտ մի բնական լիճ կայ, որ խիստ աղի,
դառն է և անկենդան: Չը նայած նրա անկենդա-
նութեան չլիակալ գիւղացիք ստեղծել են նրա
համար յաւերժական բնակիչներ, ճիւղէն ձիւր և
գամշիւն, որոնք երբեմն դուրս գալով խառնը-
վում են իրանց նմաններին հետ և ազնուացնում
են կենդանեաց ցեղը:

Վանայ մերձակալ գիւղերը՝ ինչպէս Աւանց,
Ալլուր, Դահաղի, Բոշանի զարգարված են այդեա-
տաներով, որոնց թէ պատմիչներ և թէ գիւղի
ընտիր են: Ջանիկ գիւղը մեծ աղի հանքեր ունի,
Էրմանց գիւղը—ածխահանք:

Այս գաւառի միջից անցնում է Սև գետը, որ
Կարմետ գիւղի միջից անցնելով, Եկմալ գիւղի
առաջից թափվում է ծովը:

Աւանց գիւղը Վանայ նաւահանգիստն է: Այս
գիւղի բնակիչները արեգակնային կրակով շոգիաց-
նելու միջնորդութեամբ, ստանում են ծովի ջրից
մի տեսակ աղերի և նաւորոնների խառնուրդ, որ
բնակիչներից բարակ է անուանվում: դա գործ
է անվում օճառազորներից օճառաշինութեան
համար, լողարաններում, լուսաբաններում, որ
մարդիկ և միանգամայն մազեր փափկացնող
յատկութիւն ունի: տանտիկները դժարեւի ըն-
դեղէններ գիւրաբեմ են դարձնում դրանով:

Թիմար բոլոր գաւառների մէջ ամենաաղքատն
է թէ բնականապէս և թէ նիւթապէս:

Կիւղերի թիւ	118
Հայերի թիւ	38,889
Թիւրքերի թիւ	230
Վարժարաններ	14
Աշակերտներ	2,800
Եկեղեցիներ	65
Վանքեր	13

Միացեալ ընկերութիւնը այս գաւառին մէջ
երեք վարժարաններ է բացել՝ Ալլուր, Խառակո-
նիս և Կիւսնեց գիւղերում:

3.

Բ Ե Կ Ի

Բերկի, հնում Առեբերունք, Վանայ հիւսի-
սային կողմն է, Թիմար, Խօշաք և Արճիշ գա-
ւառների մէջ, Վանէն 12 ժամ հեռաւորութիւն
ունի: գաւառագլուխն է Բերկի բերդաւանը, բայց
այժմ այն պատական Բերկի չէ մնացել:
Երեւում են, այո, հին բերդի մնացորդներ և աւե-
րակներ մեծամեծ կոյտեր, որոնց վրա շինված
են ողորմելի խզիկներ: Այս վերջին ուսու-
թական պատերազմին, Բերկի բնակատեղի
էր տաճիկ զօրաց, որոնց կեղեքող վարմունքից,
մնացած բոլոր հայ բնակիչները փախան և ցրվե-
ցան: Մնացել են մի քանի տուն թիւրքեր, ինչ-
պէս այդ աւերակների բուեր: Այս գաւառում
նշանաւոր է Տէր-Յուսէփ որդոյ վանքը, որի
չուրջը մի քանի բնական քարայրներ կան: Ի՛նչ-
դիմաճու գետը բարձրացած լինելով ողորմում էր
Փշիկ-գուժեթիլի կամրջի ձախ թիւը ու անկարելի
էր անցնել և ուղղակի ճանապարհով Արճիշ գնալ,
հարկ եղաւ 4 ժամ աւելի պտոյտ տալ, սատա-
նայի կամուրջից անցնելու համար:

Այդ հին կամուրջը որ Բերկու մօտն է, մի
նկարչական տեսարան է ներկայացնում:
Բէնդիմահու գետը Վանայ ծովի ամենամեծ
գետն է, որ քարէ օրօրանի մէջ սրնթաց վա-

